4°. Բատայ վանք Շիրակացւոց, *որ յետոյ կնկղաւորաց վանք անուանեցաւ մերձ 'ի նա. անյայտ տեղին։*

5°. Սուրբ Գէորգայ վանք. *'ի նոյն կողմն զոր Տաճիկք աւերեցին. զայս տեղի Ցոյնք առեալ մաքրեցին, որ է յարեւելս Դոշբուռ գիւղին 'ի տեղին՝ ուր ընդ առաջ եղեւ Մարթայ Ցխուսի, և 'ի վերայ քարանց յատակի եկեղեցւոյն երեւէին Հայկական տառ Տ։ Սակայն տեղին հեռի և խորան եկեղեցւոյն է 'ի ձեւ Ցունաց. այժմ է եկեղեցի նոր և վանք նոցա։*

6°. Նորավանքն՝ *մերձ գերեզմանին Եսայեայ մարգարէին. զոր քակեալ են Տաճիկք։*

7°. Խաքայ Երանելւոյ վանքն, *մերձ Սուրբ գերեզմանի մօր Տեառն, Թերեւս է պարտէզն 'ի ձեռս Հայոց։*

8°. Սրբոյն Պողիքտոսի (*) վանքն, *'ի կողմն հիւսիսոյ 'ի Զորրորդաալեաէն Հայոց չինեալ։*

9°. Արծրունեաց Ս. Գէորգայ վանքն։

10°. Զարեհաւանի վանքն՝ *արտաքոյ քաղաքին։*

11°. Մամիկոնէից վանքն՝ *որ յանուն Ս. Կարապետին։*

12°. Գուգարաց վանքն՝ *արտաքոյ քաղաքին։*

13°. Բղեշխի վանքն՝ *յանուն սրբոյն Սարգսի եւ Բագոսի մերձ 'ի Սիօն։*

14°. Ռշտունեաց վանքն, *ուր էր ուրկանոց վանօրէից Հայոց։ Արեւելեան կողմն Հրեշտակապետի վանաց հոլակոյտ, յորոյ աւերակս նստէին տակաւին ուրուկք Երուսաղէմի, որ յետոյ բարձան եւ բնակարանքն քակեցան։ Սոքա ունէին սահմանեալ հաց 'ի վանաց Ս. Յակոբայ, որ յետոյ արգելաւ։*

15°. Սիւնեաց վանքն՝ *որ յանուն Ս. Գէորգայ. զոր Տաճիկք քակեցին։*

16°. Խորխոռունեաց վանքն՝ *յայն կողմն կամ արտաքոյ քաղաքին։*

(*) Պողիքտոս զինուոր նահատակեալ յաւուրս Դեկոսի կայսեր 'ի Մելիտինէ փոքուն Հայոց, որ այժմ ասի Մալաթիա, և թաղեալ անդ. յամին 249, կամ 259։ Իսկ չորրորդապետն է Արքեղայոս վերակացու չորրորդ Հայոց Ծոփաց գաւառին, որ 'ի ձանապարհին սրով սպան զՍ. Հայրապետն Արիստակէս կրտսեր որդի Ս. Գրիգորի Լուսաւորչին և ինքն փախուցեալ գերծաւ 'ի Տորոսն Կիլիկեցւոց։